«Երաշխավորված է»

Տնօրենի՝ ՄԿԱ գծով տեղակալ՝ ______ Ռ. Հասասյան

«31» ____08____ 2023 թ.

«Հաստատված է»

Տնօրեն՝ ______ Գ. Ղարիբյան

«31» ____08____ 2023 թ.

# Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի տարեկան աշխատանքային պլան

Գեղարքունիքի մարզի

Գավառի Ս. Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոց, VIԱ դասարան

Դասղեկ՝ Ղանդիլյան Սիրուշ Լյովայի

2023-2024 ուսումնական տարի

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

| Ուսումնական տարվա սկզբին | Ամենօրյա աշխատանք | Ամենշաբաթյա աշխատանք | Ամենամսյա աշխատանքներ |
|---|---|---|---|
| 1.Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը | 1. Հետևել աշակերտների հաճախումներին և բացակայություններին | 1. Անցկացնել դասղեկական ժամեր | 1.Կազմակերպել ծնողական ժողովներ |
| 2. Սպառիչ տեղեկություններ հավաքել դասարանի աշակերտների մասին | 2.Հետևել կարգապահությանը | 2. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ | 2.Կատարել դասալսումներ |
| 3.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքային պլանը | 3.Հետևել հակահամաճարակային նորմերի պահպանմանը և մաքրությանը | | |
| 4.Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարությունը | 4. Դպրոցի տնօրենությանը ներկայացնել սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն | | |
| 5. Կազմել դասարանի հերթապահության ցանկը | | | |

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2023-2024 ուստարում VI դասարանում սովորում է 18 աշակերտ՝ 12 աղջիկ և 6 տղա: Օժտված են տարբեր ընդունակություններով, ունեն տարբեր կարողություններ և դասարանում էլ դրսևորվում են տարբեր կերպ: Տարվում են բազմաբնույթ աշխատանքներ: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանի աշակերտների

սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Դասարանում սովորում են ԿԱՊԿՈՒ 2 աշակերտներ (1տղա, 1աղջիկ)։

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ա/ աշակերտների մեջ սերմանել , մշակել և զարգացնել սեր դպրոցի, ուսման, դպրոցական կարգուկանոնի , հարաբերությունների ձևավորման նկատմամբ՝ կիրառելով մեթոդներ, հնարներ և միջոցներ

բ/ ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել աշակերտների վարքին և առաջադիմությանը.

- կատարել դասալսումներ (աշակերտների մասնակցությունը դասին պարզելու նպատակով)
- կազմակերպել քննարկումներ դասարանում դասավանդող ուսուցիչների, անբավարար առաջադիմություն ունեցող սովորողների և նրանց ծնողների հետ՝ անհրաժեշտության դեպքում սովորողի համար կազմակերպել ուսումնական օգնություն այդ թերությունները շտկելու նպատակով
- կազմակերպել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը
- աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենա, համագործակցություն, փոխօգնություն և այլն):
- հետևողական աշխատանք կատարել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ՝ համագործակցելով դպրոցի հոգեբանի և ուսուցչի օգնականների հետ։ Մասնակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների դիտարկմանը։ Ինչպես նաև մասնակցել ԱՈՒՊ-ի մշակման և վարման գործընթացի կազմակերպմանը։ Մասնակցել ամենամսյա ժողովներին

գ/ հետևողական աշխատանք կատարել, որպեսզի աշակերտները դպրոց հաճախեն դասերին պատրաստ, չլինեն ուշացումներ և անհարգի բացակայություններ

դ/ մշակել վերաբերմունք դպրոցական գույքի, գրենական պիտույքների և միմյանց նկատմամբ

3. Հայեցի դաստիարակություն

3.1- Հոգևոր դաստիարակություն

Խնդիրները՝

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

Հոգևոր դաստիարակությունը հիմնված է մշակույթի, կրոնի, լեզվի և այլ ազգային արժեքների ճիշտ արժևորման հիման վրա, որի համար նպաստավոր են դաստիարակչական ժամերի ընթացքում քննարկվելիք թեմաները: Այս բաժնում կրոնի և հավատի մասին լիարժեք տեղեկատվական և պատմական ուղեցույցը պարտադիր թեմա է: Կարևոր հիմք է պատմության խորքից մեզ ուղեկցող իրադարձությունները, որոնք կապ ունեն կրոնի ընտրության, հավատի, հոգևոր
արժեքների հետ: Այս թեմաների քննարկումը նույնպես պարտադիր կետ է։ Հայեցի և հոգևոր դաստիարակությունը հնարավոր չէ կազմակերպել առանց քրիստոնեության մասին գաղափար տալու: Հարկ է կազմակերպել նաև հոգևոր զրույցներ, էքսկուրսիաներ, լսել հոգևոր երաժշտություն, զրուցել եկեղեցական տոների մասին:

3.2-Գեղագիտական դաստիարակություն

Խնդիրները՝

Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:

Կազմակերպել միջոցառումներ՝ խթանելով աշակերտների ասմունքի, երգի, պարի, բեմական հմտությունները: Հաղորդակից դարձնել երաժշտության, կերպարվեստի գլուխգործոցներին, նպաստել ճաշակի ձևավորմանը: Կազմակերպել ունկնդրում, ցուցադրություններ, այցելություններ թատրոն, համերգասրահ: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

## 3.3- Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Խնդիրները՝

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:
Հայոց պատմության հերոսական էջերի, նշանավոր կերպարների լուսաբանման միջոցով նպաստել հայրենասեր անհատների ձևավորմանը, բարձրացնել ազգային ոգին, ինքնագիտակցությունը:

## 3.4–Ֆիզիկական դաստիարակություն

Խնդիրները՝

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:
Ֆիզիկական դաստիարակությունը արժևորելու համար դասղեկական ժամերին շոշափվող թեմաներից կարևորագույնը՝ առողջ հոգի առողջ մարմնում: Կարևորվում է սպորտով զբաղվելու և օրգանիզմը առողջ պահելու մոտիվացիաներից մեկը: Տեխնիկապես չհագեցած սպորտային դահլիճները դեռևս պատճառ չէ ֆիզիկական պատրաստվածությունը թերագնահատելու համար: Այս ուղղությամբ նույնպես վարվում են զրույցներ:

## 3.5–Աշխատանքային դաստիարակություն

Խնդիրները՝

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:
Աշխատանքային դաստիարակությունը զարգացնելու համար իրատեսական են դասարանի մաքրության և հիգիենային վերաբերող փոքրիկ աշխատանքներ իրականացնել: Դասարանը մաքուր պահել, հետևել դասարանի հարդարանքին, գույքի պահպանմանը: Կարգախոս դարձնելով <<Աշխատանքն է մայրը ամեն բարիքի>> ճշմարտությունը՝դաստիարակել հարգալից վերաբերմունք այլոց աշխատանքի նկատմամբ, սերմանել աշխատասիրություն:

## 3.6–Բնապահպանական դաստիարակություն

Խնդիրները՝

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում
Ծանոթացնել արդի բնապահպանական խնդիրներին, բացատրել դրանց հնարավոր հետևանքները մեր և ապագա սերունդների կենսագործունեության վրա, կարևորել յուրաքանչյուրի պարտադիր մասնակցությունը բնապահպանության գործընթացին:

## 2.1 - Դպրոց-ընտանիք կապը

Դպրոց-ընտանիք կապի համար պետք է նպաստեն նաև ծնողների խումբը՝ դասղեկի մասնակցությամբ և ակտիվ համագործակցությամբ: Աշակերտի ընտանիքից եկող խնդիրը պարզաբանելու համար անհրաժեշտ է կապը ծնողի հետ: Մեկ այլ կողմից- ընտանիքը պետք է վստահի դպրոցին, դասղեկին, ուսուցչին, համոզված լինի համատեղ աշխատանքի արդյունավետության վրա:Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուս/շ | Ուս. աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարող |
|---|---|---|---|
| I | Բարի գալուստ դպրոց: Իմ իրավունքներն ու պարտականությունները Դասարանի աշակերտական խորհրդի ձևավորում | | Դասղեկ<br>Աշակերտ |
| II | Ապագայի անիվը | | Դասղեկ |
| III | Լրատվամիջոցներ և կերպարներ | | Դասղեկ |
| IV | Աշխարհը հրաշալի է | | Դասղեկ |
| V | Նրա մասին, ով ամեն օր իմ կողքին է | | Դասղեկ |
| VI | Ո՞վ է առաքինի մարդը | | Դասղեկ |
| VII | Քաղաքացիական ինքնություն | | Դասղեկ |
| VIII | Հանդուրժող վարքի սկզբունքները | | Դասղեկ |
| IX | Կարող եմ օգտակար լինել | | Դասղեկ |
| X | Գնահատվող մրցույթ | | Դասղեկ |
| XI | Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը | | Դասղեկ |
| XII | Ստիպված եմ հարցնել | | Դասղեկ |
| XIII | Պետական խորհրդանիշներ | | Դասղեկ |
| XIV | Ուղևորները | | դասղեկ |
| XV | Եկեք բոլորս փորձենք այն, ինչը հնարավոր է | | Դասղեկ |
| XVI | Եթե ես լինեի... | | Դասղեկ |
| XVII | Ովքե՞ր են պատերազմներ հրահրողները | | Դասղեկ |
| XVIII | 45 րոպե աշխարհի շուրջ | | Դասղեկ |
| XIX | Հայստանի պաշտպանները երեկ, այսօր և վաղը | | Դասղեկ |
| XX | Ո՞ր գրական հերոսին կուզեի նմանվել | | Դասղեկ |
| XXI | Թերթերի սպորտային էջերը | | Դասղեկ |
| XXII | Ես աշխարհի և ինձ համար խաղաղություն եմ  ուզում | | Դասղեկ |
| XXIII | Աշխատանքն աղբյուրն է ամեն բարիքի | | Դասղեկ |
| XXIV | Հայկական ազգային խաղեր, երգեր, խաղիկ-տաղիկներ, պարեր(ծանոթություն ժող. ազգային տոներին) | | Դասղեկ |
| XXV | Արվեստը մեր կյանքում | | Դասղեկ |
| XXVI | Ի՞նչ անել , որ չհիվանդանալ | | Դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| **XXVII** | Բարեկամությունը սկսվում է ժպիտից | | Դասղեկ |
| **XXVIII** | Ինչպե՞ս գեղեցիկ դարձնել մեր շրջապատը՝ դպրոցը, տունը, բակը | | Դասղեկ |
| **XXIX** | Տունը , որտեղ ես ապրում եմ | | Դասղեկ |
| **XXX** | Կարմիր, կապույտ,ծիրանագույն | | դասղեկ |
| **XXXI** | Հաղթանակների մայիս | | Դասղեկ |
| **XXXII** | Ես աշխարհի և ինձ համար խաղաղություն եմ ուզում | | Դասղեկ |
| **XXXIII** | Թող էլ կռիվ չլինի | | Դասղեկ |
| **XXXIV** | Տարեկան արդյունքների ամփոփում | | Դասղեկ |

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԻ ՁԵՎԵՐԸ

- Զրույցներ
- Բանավեճեր
- Վիկտորինաներ
- Քննարկումներ տարբեր թեմաներով
- Ինտերակտիվ խաղեր
- Էքսկուրսիաներ
- Թատերական ներկայացումներ
- Կինոդիտումներ

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

| Անցկացման ժամկետը | Միջոցառման անվանումը | Անցկացման վայրը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |

## ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

| 1-ին կիսամյակ | | 2-րդ կիսամյակ | |
|---|---|---|---|
| Շաբաթվա օրը | դասաժամը | Շաբաթվա օրը | դասաժամը |
| Չորեքշաբթի | VII (14:15) | Չորեքշաբթի | VII (14:15) |

## ԱՎԱՆԴԱԲԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

| Համադպրոցական միջոցառման տեսակը | Կատարման ժամկետը |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

## ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

| Դասալսման օրը | Առարկան, դասավանդող ուսուցիչը | Դասի թեման | Դասալսման նպատակը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

| Անցկացման օրը | Թեման | Քննարկվող հարցերը | Ուսուցչի անուն, ազգանուն | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

| Անցկացման օրը | Քննարկվող հարցերը | Համառոտ բովանդակությունը |
|---|---|---|
| Սեպտեմբեր | 1.Դասարանի ընդհանուր բնութագիրը, այս տարվա անելիքները<br>2.Դասարանի ծնողական խորհրդի կազմի ընտրություն<br>3. Սովորողի և սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականությունները | 1. Ներկայացնել դասարանը, բնութագրել և խոսել հետագա ծրագրերի մասին<br>2.Դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար, դասարանի ծնողական խորհրդի, նախագահի ընտրություն: |
| Հոկտեմբեր- նոյեմբեր | 1. 2023-2024 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքներ<br>2. Կազմակերպչական հարցեր | 1. Ներկայացնել 2023-2024 ուստարվա պլանների սպասվող աշխատանքները և քննարկել երեխաների հիգիենային ու առաջադիմությանը վերաբերող հարցեր: Ուշադրությունը կենտրոնացնել երեխաների ուսմանը,առաջադիմությանը և հիգիենային:<br>2. Հատուկ ուշադրություն դարձնել գրքերի պահպանմանը, ուշացումներին, անհարգելի բացակայություններին և լինել օրինակելի: |
| Հունվար | 1.I կիսամյակի արդյունքների ամփոփում<br>2.II կիսամյակի խնդիրների մասին<br>3.Ծնողներին հուզող հարցեր և պատասխաններ | 1. Ամփոփել և քննարկել 1-ին կիսամյակի արդյունքները, երեխաների վարքին և կեցվածքին վերաբերվող հարցեր<br>2. Ներկայացնել ուսուցիչների կարծիքը դասարանի աշակերտների մասին, խոսել 2-րդ կիսամյակի խնդիրների մասին, աշակերտների էլ ավելի բարձր առաջադիմության մասին և մոտակա անելիքների մասին<br>3.Պատասխանել ծնողների հարցերին, քննարկել նրանց հուզող խնդիրները |
| Տարեվերջ | 2-րդ կիսամյակի և տարեկան առաջադիմության ամփոփում | 1.Ամփոփել երկրորդ կիսամյակում կատարված աշխատանքները<br>2.Տարեկան առաջադիմության ամփոփում |

ԾՆՈՂԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

| | ազգանուն, անուն, հայրանուն | հասցե | հեռախոս |
|---|---|---|---|
| Նախագահ | | | |
| Անդամներ | | | |

ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

1. Երեխաների թիվը դասարանում `18

ա)աղջիկ՝12
բ) տղա՝6
2. Ընտանիքների
թիվը ա) լրիվ կազմով՝ 13
բ) ոչ լրիվ կազմով՝ 5

3. Անապահով ընտանիքներ՝ 1
4.Բազմազավակ ընտանիքներ՝ 1
4.«Ռիսկային խմբի» ընտանիքների թիվը՝ 1

5. Ընտանիքներ, որտեղ ծնողները չեն աշխատում՝ -

6.Խնամակալության տակ գտնվող երեխաների թիվը՝1

7. Դասերից հաճախակի բացակայող երեխաներ` -

8. Դժվար դաստիարակվող երեխաներ` -

Դաստեկ՝__________________/ Ս.Ղանդիլյան /